ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Այգեձոր 67.
հեռ (+37411) 32 12 45 Վեբ կայք: minenergy.am

26.26.3/5668-15
21.10.2015թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Ձեր 12.10.2015թ.
թիվ 262-ի 6

Հարգելի պարոն Հայրապետյան.

Ի պատասխան Ձեր վերոնշյալ հարցման հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն. «Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը»:

Ուստի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետի- ՀՀ ընդերքի գլխավոր պետական տեսուչի (այսուհետ՝ տեսչության պետ) աշխատավարձի չափը ճշտելու համար խնդրում եմ դիմել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմին, քանի որ նշված տեղեկատվության տրամադրումն տեսչության պետի լիազորությունների շրջանակից դուրս է:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների
նախարարության աշխատակազմի ընդերքի
պետական տեսչության պետ- ՀՀ ընդերքի
գլխավոր պետական տեսուչ Սամվել Մկրտչյան

?????? ????????
Oct 21 2015 4:18 PM